



Սույն թվականի հուլիս-օգոստոս ամիսներին Վորլդ Վիժն Հայաստան Ավակերդու ՏՁԾ-ի ֆինանսական աջակցությամբ մեկնարկեց «Ներդաշնակ ընտանիք» ծնողավարման դասընթացը:

Դասընթացը բաղկացած էր չորս մոդուլից՝

1. «Անդրադարձ անցյալին»
2. «Ճանաչենք ներկան»
3. «Մտապատկերել ապագան»
4. «Հետամուտ լինել մեր երազանքին»

Դասընթացը վարում էին «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի սոցիալական աշխատողներ Արմինե Շախկյանը և Լուսինե Իսրայելյանը, Ախթալա և Օձուն համայնքի հոգևոր առաջնորդներ Տեր Հեթում Քահանը Թարվերդյանը և Տեր Վրթանես Քահանա Բաղայանը:

Հանդիպումներին մասնակցում էին Ախթալա, Այրում, Արևածագ, Մղարթ համայնքների ծնողները:

Յուրաքանչյուր մոդուլի ընթացքում սոցիալական աշխատողները և հոգևոր հայրերը

Ներկայացնում էին տվյալ մոդուլի բովանդակությունը, տեղի էին ունենում ակտիվ քննարկումներ, ծնողները ստանում էին իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

Դասընթացի ավարտին ծնողներին սպասվում էր հետաքրքիր անակնկալ: Վորլդ Վիժն Հայաստանի աջակցությամբ Արևածագ և Մդարթ համայնքի ծնողները մեկնեցին ուխտագնացության դեպի Էջմիածին, իսկ Ախթալա և Այրում համայնքի ծնողները մկրտվեցին Ախթալայի վանքում, այնուհետև եղան Օձունի, Սանահինի, Հաղպատի եկեղեցիներում:

